Տ. Ներսէս Ե. կաթուղիկոսի, մտի ի ժառանգաւորաց դպրանոցն Ս. Էջմիածնի, ուր յայնժամ վերատեսուչ էր արժանայիշատակ Յովհաննէս եպիսկոպոսն Շահխաթունեաց, իսկ ուսուցիչ՝ Մակար և Եղիազար վարդապետքն (որք ապա նախամեծար արքեպիսկոպոսունքն էին Էջմիածնի[1])։

Դ. Ի 1851 ամի Տէր Ներսէս կաթուղիկոսն բաւական համարելով զմեր ուսումնառութիւնն, ի 16 սեպտեմբերի, ինքնին պատարագելով ի տաճարի Ս. Էջմիածնի (որ նոր օրինակ առանձնաշնորհութիւն իմն էր[2]), շնորհեաց մեզ զչորրորդ աստիճան դպրութեան, ընդ այլ եւս քանի դպրաց, և ոմանց դաստիճան սարկաւագութեան, յորոց այժմ (1896) են՝ Սարգիս և. պիսկոպոս Տէր Գասպարեան, Պօղոս վարդապետ Տէր Մարգարեանց և այլն։ Եւ յետ այնր, կոնդակաւն ի 28 նոյեմբերի այնր 1851 ամի, համարաւն 423, յանձնեաց Սինոդին կարգել զիս քարտուղար ի վանքական կառավարութեան Մայր Աթոռոյս, որոյ նախագահն էր մեր վարժապետ Մակար եպիսկոպոսն, և Սինոդն դրութեամբ ի 15-ն փետրուարի յետագայ 1852 ամի № 220, կարգեաց զիս յայնմ պաշտաման քարտուղարութեան, որպէս և զմիւս ընկերակիցսն իմ յիշատակեալս, կարգեաց զբրագիր Սինոդի, այնու հեռատես նպատակաւ, զի զդպրացս ուսանելով զկարգ և զձեւ պաշտօնական գրագրութեանց և գործառնութեանց, նախապատրաստ լինէաք անդամութեան Սինոդի և նախածանօթ ազգային գործոց և վարչութեան նոցին[3]։

---

[1])Մակար Արքեպիսկոպոսն յայտնի է ի 21-ն ապրիլի 1885 ամի կաթուղիկոս ամենայն հայոց ընտրուելովն, հաստատուելովն և ի 10-ն նոյեմբերի օծուելովն ի հայրապետութիւն ամենայն հայոց։

[2])Սովորաբար ձեռնադրութիւնք ստորին պաշտօնէից, այն է՝ դպրաց, կղերիկոսաց, սարկաւագաց, քահանայից (և վարդապետաց) առնեն եպիսկոպոսունք յայլ վանս օրայս և յեկեղեցիս, իսկ կաթուղիկոսունք միայն ձեռնադրեն զեպիսկոպոս։ ի տաճարի Ս. Էջմիածնի։ Եւ այսպէս վայել է, ըստ որում Էջմիածինը մայր Աթոռն է Հայաստանեայց։

[3])Բայց Ներսէս Կաթուղիկոսի ի Տփխիս բացակայութեան պատճառաւ, այն հեռատես կոնդակը անկատար մնաց, նշանակած սարկաւագ գրագրաց մի մի արտաքին պաշտօնով գրագրեցնելով, զոր օր տնտես, մատանագիր,